

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՁԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան  
Ժ.12.00

24 հոկտեմբերի 2011թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 39 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետի մամլո քարտուղարը, աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. «Մուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին:
5. «Մեցոպիանո» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության, կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
6. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
7. Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:
8. Գույքը նվիրաբերելու մասին:
9. Երևան համայնքի սեփականություն համարվող աղբամաններն անհատույց օտարելու մասին:
10. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքի օտարման մասին:
11. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

12. Երևան քաղաքի ենթակայության «Երքադույս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարող կազմակերպությանը տալու մասին:
13. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
14. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
15. Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:
16. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
17. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
18. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
19. Երևանի քաղաքապետի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N4272-Ս որոշմանը համաձայնություն տալու մասին:
20. Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
21. Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:

**1.ԼՍԵՅԻՆ** – Օրակարգի հաստատման մասին:

Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը ներկայացրեց Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկությունը՝ օրակարգի նախագծի 13-րդ և 15-րդ հարցերը հանել օրակարգից, լրացուցիչ ուսումնասիրելու և վերամշակելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**-Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տ.Մարգարյանը, Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն.Նահապետյանը, նախագահի տեղակալ Պ.Փլավյանը, ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ե.Ազարյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Հաստատել Երևանի ավագանու վեցերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**2.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման N 4 հավելվածում կատարել հետևյալ լրացումն ու փոփոխությունները.

1) «Լ.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Տրանսպորտի վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 կետով.

1.1	վարչության պետի տեղակալ	1	250,0		250,0
-----	-------------------------	---	-------	--	-------

ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «8» և «1515,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «9» և «1765,0» թվերով:

2)«Լ.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «416» և «78259,5» թվերը փոխարինել համապատասխանաբար «417» և «78509,5» թվերով:

3)«Ամբողջը» տողում «1964» և «312729,89» թվերը փոխարինել համապատասխանաբար «1965» և «312979,89» թվերով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
 դեմ – 0  
 ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**3.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված.

- 1) Եկամուտների գումարն ավելացնել 13,019.3 հազ. դրամով,
- 2) ծախսերի գումարն ավելացնել 13,019.3 հազ. դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում

կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**4.ԼՍԵՑԻՆ**–«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության Արտաշիայան 46ա և Բաբաջանյան 21 հասցեներում գտնվող շենքերի հաշվեկշռային արժեքներն ավելացնել համապատասխանաբար 196232948 դրամ և 94075846 դրամ արժեքներով:

2.«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 96769 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 290307000 դրամով՝ այն սահմանելով 380490000 դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 126830 հատ, յուրաքանչյուրը՝ 3000 դրամ անվանական արժեքով:

3.Հաստատել Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը համաձայն հավելվածի /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**5.ԼՍԵՑԻՆ**–«Մեցոպիանո» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության, կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Հաստատել «Մեցոպիանո» համայնքային ոչ առևտրային կազմակերպության.

1) կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի /կցվում է/,

2) կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի /կցվում է/:

2. Առաջարկել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին՝ ապահովել «Ալան Հովհաննես» Աջափնյակի կամերային նվագախումբ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման պետական գրանցումը «Մեցոպիանո» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշման 1-ին կետով հաստատված

1)N4 հավելվածում «Բարֆյան Ռազմիկ- Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «Լուսինե Հակոբյան- Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ» բառերով:

2) N6 հավելվածում «Ավետիսյան Նելլի» բառերը փոխարինել «Ստեփանյան Հայկ» բառերով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ.Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1. Հաստատել Երևան քաղաքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոնները՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**8. ԼՍԵՑԻՆ**– Գույքը նվիրաբերելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ Ս. Մաքսապետյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող 275 միավոր մեքենա–մեխանիզմները նվիրաբերել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ կանաչ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**9. ԼՍԵՑԻՆ**–Երևան համայնքի սեփականություն համարվող աղբամաններն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Տ. Հարությունյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող 100 հատ 60 լիտրանոց աղբամանները (2038750 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքային համայնքին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10.ԼՍԵՑԻՆ**– Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքի օտարման մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է. Ներսիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Երևան քաղաքի սեփականություն համարվող 10000 հատ տպաքանակով Երևան քաղաքի մասին ուղեգրքերն ուղղակի վաճառքի ձևով օտարել ձեռք բերողներին՝ ուղեգրքերի պատրաստման և տպագրության պայմանագրային արժեքից ոչ պակաս գնով:

2) Երևան քաղաքի սեփականություն համարվող 10000 հատ տպաքանակով Երևան քաղաքի մասին ուղեգրքերը նվիրել Երևանի քաղաքապետարանի հյուրերին, որպես Երևանի քաղաքապետարանի հուշանվեր:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**11.ԼՍԵՑԻՆ**– Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N258-Ս որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Է. Ներսիսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**– Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N258-Ս որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1)«Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերությունում «որը նախատեսում է Երևան 184,8 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում» բառերը փոխարինել «որը նախատեսում է Երևան քաղաքում 210,7 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում» բառերով:

2) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերության 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Այսինքն, քաղաքապետարանը 2011թ. ՄԱԶԾ-ի տնօրինությանը հատկացնելու է 40,67 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ. 64,68 մլն ՀՀ դրամ գումար և հաշվի առնելով ՄԱԶԾ-ի նույնչափ հատկացումը ծրագրի իրականացման աշխատանքներին՝ 2011թ.-2012թթ կիրականացվի 210,7 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիր, որից 2011թ. կիրականացվի 68,39 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ.՝ 142.31 մլն ՀՀ դրամ արժողությամբ աշխատանքներ»:

3) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի 2-րդ պարբերությունում «ինչպես նաև քաղաքի տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքներ» բառերը փոխարինել՝ «ինչպես նաև քաղաքի տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի, վերանորոգման կարիք ունեցող շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ» բառերով:

4) «Պայմանագրի հիմնական դրույթները» հատվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Քաղաքապետարանը ՄԱԶԾ-ի տնօրինությանն է հանձնում 105,35 մլն ՀՀ դրամի հատկացում, իսկ ՄԱԶԾ-ն ծրագրի իրականացման համար կատարում է 105,35 մլն ՀՀ դրամի հատկացում՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցով»:

Առաջարկել Երևանի քաղաքապետին սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունների համաձայն ծրագրի համաֆինանսավորումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**12.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի ենթակայության «Երբաղույս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարող կազմակերպությանը տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչության պետ Ա.Արշակյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Հավանություն տալ Երևան քաղաքի ենթակայության «Երբաղույս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարող կազմակերպությանը տալու գործընթացին՝ այդ նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից նախաձեռնած մրցակցային երկխոսության ընթացակարգով՝ «ԵԶ-ՄԵԾԶԲ-11/2» ծածկագրով «Երբաղույս» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորությունների իրականացման ծառայությունների ձեռքբերման եղանակով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**13.ԼՍԵՑԻՆ**– Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետի ժ/պ Մ.Մկրտչյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ**– Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն.Նահապետյանը, նախագահի տեղակալ Պ.Փլավյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Գույքահարկի գծով արտոնություն սահմանել Երևան քաղաքում հաշվառված Հայաստանի Հանրապետության կարիքավոր քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, բնակելի նշանակության շինությունների մասով նվազեցնելով գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու օրվա դրությամբ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 1-ը առկա հարկային պարտավորությունները, որի ընդհանուր գումարը կազմում է 5.385,9 հազար դրամ՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 25

դեմ – 14

ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ**

**14.ԼՍԵՑԻՆ**– Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետի ժ/պ Մ.Մկրտչյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1. Գույքահարկի գծով արտոնություն սահմանել սույն որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով, նվազեցնելով գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու օրվա դրությամբ՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 1-ը առկա հարկային պարտավորությունները, իսկ սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց՝ 2011 թվականի գույքահարկի գծով պարտավորությունները:

2. Սույն որոշումը, գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու նպատակով, տարածվում է՝

1) Հայրենական մեծ պատերազմի վետերանների,

2) Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների ընտանիքների և առաջին խմբի զինհաշմանդամների.

3) Արցախյան և Աֆղանստանի պատերազմների 2-րդ խմբի զինհաշմանդամներին՝ Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով:

2.1 Որոշման 2-րդ կետում նշված անձանց գույքահարկի արտոնություններ տրամադրել սեփականության իրավունքով նրանց պատկանող բնակելի նշանակության շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այն բնակելի նշանակության շինությունների սեփականության նկատմամբ, որտեղ հաշվառված են այդ անձինք: Գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների առկայության դեպքում սույն որոշումը տարածվում է այդ շինություններից մեկի նկատմամբ՝ ըստ գույքահարկի արտոնություն սատացած անձի կամ նրա ընտանիքի ցանկության:

### 3. Երևանի քաղաքապետին՝

սույն որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ սույն որոշման 2-րդ կետում նշված հարկատուների գրանցման և գույքի գտնվելու հասցեների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը՝ մինչև դեկտեմբերի 1-ը օրենսդրությամբ սահմանված կարգով ճշտելու, ձեռք բերելու և անհրաժեշտ ձևակերպումներ կատարելու համար:

4. Այն անձինք, որոնք կհրաժարվեն գույքահարկի արտոնության տրամադրումից, այդ մասին գրավոր հայտնում են Երևանի քաղաքապետին, որի հիման վրա կատարվում է վերահաշվարկ:

5. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունը տարածվում է որոշման 2-րդ կետում նշված այն անձանց վրա, ովքեր գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունները ձեռք են բերել կամ դրանցում հաշվառվել են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**15.ԼՄԵՑԻՆ**– Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների գանձման և հաշվառման վարչության պետի ժ/պ Մ.Մկրտչյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ**-Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն.Նահապետյանը և նախագահի տեղակալ Պ.Փլավյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող գույքային միավորների գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով (մինչև 2007 թվականը ներառյալ ընկած ժամանակահատվածը) տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 145.856,3 հազար դրամի չափով՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 25  
դեմ – 0  
ձեռնպահ – 14

**Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ**

**16.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Թույլատրել Երևանի քաղաքապետին Ա.Քոչինյան փողոցի հ.2/1 շենքի հ.26՝ 10.7քմ ընդհանուր մակերեսով սենյակը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 08.06.2011թ. հ.2471809 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Պետրոս Գյուրջինյանին, Լավուրա Մանուչարյանին, Հերմինե Գյուրջինյանին, Հովսեփ Գյուրջինյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**17.ԼՍԵՑԻՆ**–Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Բաբաջանյան փողոցի հ.26/6 շենքի 6-րդ հարկի հ.28՝ մեկ սենյականոց բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 29.09.2009թ. հ.2675975 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռոմիկ Գրիգորյանին և Հռիփսիմե Հովնանյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**18.ԼՍԵՑԻՆ**–Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Կիլյան փողոցի հ.8/4 շենքի հ.21՝ 14.0քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.06.2011թ. հ.2727828 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սիլվա Առուստամյանին և Տիգրան Առուստամյանին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**19.ԼՍԵՑԻՆ**–Երևանի քաղաքապետի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N4272-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Ա. Ուլիխանյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագիրն ու փոխանցման ակտը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի N1657-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N4272-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**20.ԼՍԵՑԻՆ**–Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կամակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի տեղակալ Ե. Մարգարյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**–1.Հաստատել Երևանի «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը /կցվում է/:

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին ապահովել կազմակերպության կանոնադրության փոփոխության պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթների և ձևակերպումների իրականացումը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**21.ԼՍԵՑԻՆ**–Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ**-Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի տեղակալ Ե. Մարգարյանը:

**ՈՐՈՇՎԵՑ**– 1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն):

2.Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարային հանձնաժողով:

3.Լուծարային հանձնաժողովին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Կազմակերպության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 39  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

## ԸՆԴՄԻՋՈՒՄ

Նիստը վերսկսվեց ժամը 13.05-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին պատասխանեցին Երևանի քաղաքապետը, քաղաքապետի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանն առաջարկեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2011 թվականի նոյեմբերի 23-ին ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Արձանագրեց՝  
Ն. Ղուկասյանը